Արձակ, Պատմվածք, Հայ գրականություն

16+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի վերջերին գարունը հանկարծ հիշեց, որ ինքը դեռ չի եղել կալանավորների աշխարհում։ Վերցրեց իր հետ արևը և գնաց այնտեղ։

Առաջին օրերը ոչ գարունն էր օգուտ տալիս, ոչ արևը։ Նույնիսկ ընդհակառակը։ Երկնքից վերցրել էր համատարած ամպերի տաք վերմակը, օրերը ցրտել էին։ Մի քանի օր հետո, սակայն, կալանավորների մեջքերն սկսեցին տաքանալ արևի տակ։

— Դա նրանից է, որ մեր հագուստները սև են, իսկ արևը սիրում է սև գույնը,— բացատրեց ֆիզիկայի երբեմնի մի ուսուցիչ, որն այժմ սահնակապան էր։

— Նաև նրանից, որ մենք ուղղահայաց մարմիններ ենք և արևի ճառագայթները համարյա ուղիղ անկյան տակ են խփվում մեզ,— ավելացրեց ֆիզիկայի մի այլ ուսուցիչ, որը նույնպես սահնակապան էր։

Ճամբարներում ոչ ոք չէր զարմանում այդպիսի զուգադիպությունների վրա։ Ճիշտն ասած, դրանք զուգադիպություններ էլ չէին, այլ օրինաչափություններ։ Հյուսիսային Նադեժինստ քաղաքից, օրինակ, այդտեղ կային քսանչորս կալանավորներ, որոնք, մեկը մյուսից անկախ, դատապարտվել էին Անդրկովկասում աշխատող այսինչի դեմ մահափորձ նախապատրաստելու համար։ Ընդ որում, նախապատրաստությունն այնքան խնամքով էր եղել քողարկված, որ դրա մասնակիցներից ոչ մեկը ոչ միայն չէր եղել Անդրկովկասում, այլև չէր էլ պատրաստվում երբևէ մեկնել այնտեղ։ Ավելին.— հետախուզական մարմիններին բոլորովին մոլորեցնելու համար նրանք ոչ ռումբ էին պատրաստել և ոչ էլ զենք պահել, այլ իրենց համար աշխատել էին մետաղաձուլական գործարանում։

Ճամբարում նրանք բոլորը սահնակապաններ էին։ Երբ որևէ ուրիշին էլ էին նշանակում սահնակապան, նադեժդինսկցիները կատակով ասում էին նրան.

— Ինչո՞ւ ես եկել, գնա ծառ կտրելու։ Սահնակապանությունը տեռորիստի գործ է...

Եվ իրոք. Լենինգրադի մարզի ինչոր փոքրիկ գյուղի համարյա բոլոր դպրոցներից հավաքել էին ֆիզիկայի համարյա բոլոր դասատուներին և ձերբակալել՝ դարձյալ մեղադրելով տեռորի նախապատրաստության մեջ՝ դարձյալ Անդրկովկասում աշխատող նույն այսինչի դեմ։ Իսկ ճամբարում նրանց բոլորին ևս նշանակել էին սահնակապաններ։ Դե, եկ ու մի հավատա, որ սահնակապան լինելը տեռորիստի գործ է։

— Ձյունը, որպես սպիտակ մարմին, համարյա ամբողջովին անդրադարձնում է արևի ձառագայթները, ուստի և դեռ երկար ժամանակ չի հալչելու,— տխուր եզրակացություն հանեց ֆիզիկայի մի երրորդ ուսուցիչ, որը նույնպես սահնակապան էր։

Մի քանի օր հետո, երեկոյան կողմ, վերակարգիչը մտավ ծառահատների բարաքը և պատվիրեց ճյուղ կտրելու վրա աշխատող Անտոն Տուլուպովին.

— Վաղն աշխատանքի դուրս չես գա բրիգադի հետ։ Ես ուրիշ տեղ եմ ուղարկելու քեզ։

Անտոն Տուլուպովը նույնպես ֆիզիկայի ուսուցիչ էր և նույնպես տեռորիստ, որն իր արյունարբու ծրագրերն իրականացնելու համար առավոտից երեկո դաս էր տալիս աշակերտներին։ Բայց նրան, վատ առողջության պատճառով, չէին նշանակել սահնակապան։

Առավոտյան Տուլուպովին աշխատանքի ուղարկեցին առանց բրիգադի, և որ գլխավորն է՝ առանց պահակի։ Լինելով, ըստ երևույթին, ցածրորակ տեռորիստ, նա ստացել էր ոչ թե տասնհինգ, այլ հինգ տարի ժամկետ, որից երեքն արդեն նստել էր։ Ուստի և չէին վախենում, թե նա կարող էր փախուստ կատարել։

Տուլուպովին հանձնարարեցին ձյուղ կտրելուց էլ հեշտ աշխատանք։ Ճամբարից երեքչորս կիլոմետր հեռավորության վրա տայգայով անցնում էր Լենինգրադ—Մուրմանսկ երկաթուղին՝ ճահճոտ գետնի վրա բարձրացած իր անվերջանալի լիցքով։ Եվ ահա, ֆիզիկայի օրենքի համաձայն, ձյունը որ դեռ փռված էր ամեն տեղ, լիցքի հարավային թեք կողի վրա արդեն հալչել էր։ Իսկ ճամբարի սահնակների ճանապարհն անցնում էր երկաթգծի վրայով Հարկավոր էր, ուրեմն, թիակներով ձյուն կրել այլ տեղերից և լցնել այդտեղ, լիցքի լանջի վրա։

Տուլուպովը կես ժամում ավարտեց իր գործը և կանգ առավ հանգիստ, մեջքն արևին արած։ Դրանից հետո, միայն երբեմներբեմն, մանավանդ սահնակների անցնելուց հետո, հարկ էր լինում թեթևակի սրբագրել ճանապարհը, այսինքն՝ ավելացնել էլի մի քիչ ձյուն։ Մի ժամում անցնում էին հազիվ երեքչորս սահնակ։

Դժվարն աշխատանքը չէր, այլ երկաթուղին... Դա ուղիղ տանում էր դեպի Լենինգրադ։ Այսինքն՝ ոչ թե տանում էր, այլ կարող էր տանել՝ եթե դու լինեիր ազատ մարդ, գտնվեիր «Հյուսիսային նետ» ճեպընթաց գնացքում... Եվ քանի որ այդպես չէր, կալանավոր Տուլուպովի հոգին ընկճված էր և տխուր։ Այնպիսի տանջալի ապրումներ էր պատճառում նրան երկաթուղին, որ նա մինչև իսկ զղջաց, որ համաձայնվել էր գալ այդտեղ։

Բարձրանալով լիցքի վրա, նա կանգնեց ռելսերի միջև, թախիծով նայեց դրանց սահուն գծերին։ Սակայն նրա թախիթն զգալի չափով ավերվում և մասամբ էլ զավեշտի շեշտ էր ստանում այն հիմար պատճառով, որ նա չէր կարողանում որոշել, թե որ կողմումն էր Լենինգրադը և որ կողմում՝ Մուրմանսկը։ Ոչ արևով, ոչ մի այլ նշանով չէր կարելի որոշել դա, որովհետև,— Տուլուպովն այդ գիտեր,— երկաթուղին տայգայում, շրջանցելով ճահիճները, կատարում էր շատ շրջադարձեր և տեղտեղ գնում էր համարյա հակառակ ուղղությամբ։ Դե եկ ու որոշիր, թե ինչ շրջադարձի վրա ես դու կանգնած։

Անցնող սահնակապանները, Տուլուպովի նախկին կոլեգաները, ամեն անգամ կոպիտ հայհոյում էին նրան, որ ճանապարհը լավ վիճակի մեջ չէ։ Ճանապարհը, իհարկե, լավ վիճակի մեջ էր, բայց հայհոյելն անհրաժեշտ էր, այդպես էր կարգը։

Կեսօրը հազիվ էր անցել, երբ Տուլուպովը հանկարծ լսեց շոգեմեքենայի ձայն։ «Հյուսիսային նետը...»... Նա արագ մագլցեց լիցքն ի վեր, կանգնեց գծի մոտ՝ պատրաստվելով դիտել գնացքը։ Իսկ դիտել հարկավոր էր աչքերը չորս բացած, որովհետև «նետը» սլանալու էր շատ արագ։

Շուրջը երկգույն բնությունն էր՝ կանաչ և սպիտակ։ Տայգա և ձյուն։ Եվ ահա, այդ բնության մեջ, հայտնվեց նա՝ սքանչելին, քաղաքակրթության մի ավարտված մասնիկը, վաղուց ի վեր Տուլուպովից հեռացած...

«Նե՞տն» էր դանդաղ սլանում, թե՞ կալանավորն էր իր ծայր աստիճան լարած ուշադրությամբ ընդարձակում վայրկյանները։ Ինչ էլ որ լիներ, նա տեսավ վագոնների լուսամուտները՝ առանձինառանձին, լուսամփոփավոր լամպեր և գույնզգույն պիտակներով ինչոր պահածոներ՝ սեղանակների վրա, և մարդկանց՝ դրանց մոտ նստած, դուրս նայելիս։ Տեսավ կուպեների տաք ու փափուկ հանգստավետությունը...

Տուլուպովը հանկարծ մի խելահեղ ցանկություն զգաց ինքն էլ գտնվելու այնտեղ՝ ինչպես մի ժամանակ... Նա արագ բարձրացրեց ձեռքը՝ բռնելու համար սլացող դռներից մեկի երկաթե ձողը և ցատկելու համար աստիճանների վրա։ Լուսամուտներից մեկում նա տեսավ մի կնոջ զարմացած հայացքը, ապա տեսավ հերթական դուռը և... ոչինչ չարեց:

Եթե փորձեր, սլացող գնացքի իներցիան անշուշտ պիտի սպաներ նրան։ Բայց Տուլուպովին ետ պահեց ոչ թե ֆիզիկայի օրենքը, այլ մի ուրիշ օրենք՝ ավելի խիստ, թեկուզև ապօրինի... Այդ չէր ազատության ճանապարհը...

Կատարվեց մի անսպասելի բան։ Գնացքը դանդաղեցրեց ընթացքը և կանգ առավ մի քիչ հեռվում, թեև այնտեղ չկար ոչ կայարան և ոչ կիսակայան:

Տուլուպովը նայեց զարմացած։ Գնացքից իջնելով, դեպի նա սկսեց վազել այն կինը, որին կալանավորը տեսել էր իր ձեռքը բարձրացնելու ժամանակ։ Կինը վազում էր բարձրակրունկ տուֆլիներով, ներսի թեթև հագուստով, առանց ուշադրություն դարձնելու փուխր ձյանն ու ցրտին:

Տուլուպովը վազեց նրան ընդառաջ։ Նրանք հասան միմյանց, կանգ առան դեմդիմաց, մի պահ նայեցին իրար, և կինը, հուզմունքից շնչասպառ, հարցրեց.

— Այդ դո՞ւ ես, Սերյոժա...

Անտոն Տուլուպովը գլուխն օրորեց բացասաբար:

— Դու ձեռքով ինձ նշան արեցիր...— Կինը փղձկաց։— Նիհարել ես, մազոտվել, փոխվել, չեմ ճանաչում քեզ։ Բայց դու ես, մի՛ խաբիր...

Վագոնների դռներում երևացին դուրս նայող մարդիկ։ Նայում էր նաև մեքենավարը։ Մի վագոնից պոկվելով, դեպի կինն ու կալանավորը վազեց գնացքի պետը:

— Դու ես, թե դու չես՝ միևնույնն է,— արագարագ շշնջաց կինը։— Երբ գնացքը շարժվի՝ բարձրացիր վերջին վագոնի սանդղակի վրա, փախիր... Մի օր էլ գուցե իմ Սերյոժան...

— Ոչ...— ընդհատելով, գլուխն օրորեց Անտոնը։— այդ չէ ազատության ճանապարհը...

— Ես քեզ դրամ կտամ, հասցե...

— Քաղաքացի, այդ դո՞ւք կանգնեցրիք գնացքը,— մոտենալով, զայրացած հարցրեց գնացքի պետը:

— Այո,— ասաց կինը՝ թախիծով և անտարբեր։— Ես կվճարեմ սահմանված տուգանքը:

— Ոչ թե տուգանք, այլ դատի տակ կնկնեք՝ առանց լուրջ պատճառի այդպիսի բան անելու համար։ Ինչո՞ւ կանգնեցրիք:

— Լուրջ պատճառով,— միջամտեց կալանավորը:

— Իսկ դո՞ւ ով ես:

— Այո:

— Ի՞նչ «այո»,— գոռաց գնացքի պետը:

— Այո, ես քաղաքական կալանավոր եմ։ Քանի որ արժանի չեք տեսնում «դուք»ով դիմել ինձ՝ նշանակում է՝ շատ լավ գիտեք։ Հենց դրա համար, իմ ով լինելու համար, ես ձանձրացել եմ կյանքից։ Ուզում էի նետել ինձ գնացքի տակ։ Այս քաղաքացուհին տեսավ իմ շարժումը և կանգնեցրեց գնացքը:

— Այդպե՞ս է,— հարցրեց գնացքի պետը կնոջը:

— Այդպես է, պատասխանեց կինը:

— Ես քեզ դատի կտամ, ժողովրդի թշնամի,— գոռաց գնացքի պետը:

— Արդեն տվել են։ Երեք տարի առաջ:

— Գնանք, քաղաքացուհի, ուշացնում եք գնացքը։ Գուցե դու դիվերսիա՞ էիր ուզում անել գնացքի հետ,— կասկածով հարցրեց նա կալանավորին:

— Ոչ։ Իմ մասնագիտությունը տեռորն է:

— Գնանք, գնանք,— շտապեցրեց գնացքի պետը կնոջը՝ ծուռծուռ նայելով կալանավորի փայտե լայն ու ծանր թիակին:

Երբ գնացքը սուլեց և սկսեց շարժվել դանդաղությամբ, Անտոն Տուլուպովը հավաքեց իր վտիտ մարմնի մեջ մնացած ամբողջ կամքը՝ չբռնելու համար վերջին վագոնի դռան ձողից և չցատկելու համար դրա աստիճանների վրա:

«Հյուսիսային նետն» անհետացավ երկաթուղու հեռու շրջադարձի ետևում: